



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՐԻՍԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱԳԵՏԷ Ս. ՆԱՅԱՏԱԿԱՅ ԵԿԵՂԵՑՈՅ ՊԱՏԱՐԱԳԻՆ**

Կիրակի, Մայիս 20-ին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան պիտի հանդիսապետե Էնսինոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ Ս. Պատարագին, եւ օրուան խորհուրդը ներկայացնող պատգամ մը պիտի փոխանցէ հաւատացեալներուն:

Կը հրաւիրենք մեր ժողովուրդի զաւակները, որպէսզի ներկայ ըլլան Ս. Պատարագի արարողութեան եւ հաղորդուին օրուան պատգամով:

### **PRELATE TO PRESIDE OVER MASS AT HOLY MARTYRS CHURCH**

On Sunday, May 20, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Holy Mass at Holy Martyrs Church in Encino and will deliver the sermon.

### **ՀԱՅՐԵՆԱՆՈՒԷՐ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ ՍԸ**

Armenian International Medical Fund-ը կազմակերպած է իր երրորդ տարեկան ճաշկերոյթը, որ տեղի պիտի ունենայ Կիրակի, 20 Մայիսին, Կլենտէյլի «Հիլթըն» պանդոկին մէջ: Այս կազմակերպութիւնը Հայրենիքի մէջ բժշկական ծառայութիւններ կը մատուցէ հայ խուլ մանուկներու լսողութիւնը բուժելու համար:

Յանուն Առաջնորդ Սրբազան Հօր, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն՝ Արժ. Ս. Վազգէն Քհնյ. Աթմաճեան ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին եւ պիտի փոխանցէ Առաջնորդ Սրբազան Հօր խօսքը:

### **ARMENIAN INTERNATIONAL MEDICAL FUND GALA DINNER**

The third annual gala dinner of the Armenian International Medical Fund will take place on Sunday, May 20<sup>th</sup>, at the Glendale Hilton Hotel. Proceeds from the gala will go towards assisting deaf children in Armenia.

Rev. Vazken Atmajian, pastor of St. Mary's Church, will attend on behalf of the Prelate and convey his blessings.

## Ի ՊԱՏԻ ԶԱՅ ԴԱՏԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐՈՒ

Կազմակերպութեամբ Պրրպէնքի Զայ Դատի Յանձնախումբին, Ուրբաթ, Մայիս 18-ի երեկոյեան, գնահատանքի ճաշկերոյթ մը տեղի պիտի ունենայ Պրրպէնքի La Bella ճաշասրահին մէջ: Ձեռնարկին ներկայ պիտի ըլլան Պրրպէնքի քաղաքապետն ու այլ քաղաքական եւ կազմակերպութեանց ներկայացուցիչներ:

Այս ձեռնարկին նպատակն է Պրրպէնքի պաշտօնատարներուն եւ պատասխանատուներուն աւելի մօտէն ծանօթացնել եւ տեղեկութիւններ փոխանցել Զայ Դատի աշխատանքներուն մասին եւ միեւնոյն ժամանակ գնահատել ի նպաստ Զայ Դատին ծառայող ոչ-հայ անձնաւորութիւններ:

Ճաշկերոյթի պատուոյ նախագահն է՝ Ներկայացուցիչներու Տան 43-րդ Ընտրական Շրջանի ներկայացուցիչ Փօլ Գրիգորեան:

Յայտնենք որ տիար Փօլ Գրիգորեան ու իր կինը՝ Թամար երկար տարիներ գործօն մասնակցութիւն բերած են Պրրպէնքի Զայ Դատի Յանձնախումբէն ներս:

Յանուն Առաջնորդ Սրբազան Զօր, Արժ. Տ. Խորէն Ա. Քիւնյ. Զապէշեան ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին եւ պիտի փոխանցէ Առաջնորդ Սրբազան Զօր խօսքը:

## SECOND ANNUAL BANQUET OF THE BURBANK ARMENIAN NATIONAL COMMITTEE

On Friday, May 18, the second annual banquet of the Armenian National Committee of Burbank will take place at La Bella Banquet Hall in Burbank. The banquet serves to publicize the activities of the Armenian National Committee and at the same time to commend the previous year's activities. State Assembly member Paul Krikorian serves as Honorary Chair of the Banquet Committee.

Archpriest Rev. Khoren Habeshian will represent the Prelate at the event and convey his remarks.

## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՆԵՐԿԱՅ ԵՂԱՒ ԴՈԿՏ. ՄԱՅՔԸԸ ՅԱԿՈՐԵԱՆԻ ԵՒ ԴՈԿՏ. ՌԻՉԸՐՏ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆԻ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄԻ ԶԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ

Հինգշաբթի, 15 Մայիսի երեկոյեան, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան ներկայ եղաւ երկու նուիրեալ հայորդիներու պարգեւատրումի հանդիսութեան, որ կազմակերպուած էր «Ճիւղիչ Ուրբաթ Ուղի» խմբակին կողմէ:

Տոքթ. Մայքըլ Յակոբեան եւ Տոքթ. Ռիչըրտ Յովհաննեսեան արժանացան «iWitness Award» մրցանակին, ընդհանրապէս ցեղասպանութեան ու մասնաւորաբար Զայկական Յեղասպանութեան նկատմամբ հետաքրքրութիւն ու արթնութիւն առաջացնող իրենց

բազմամեայ աշխատանքին համար: Հանդիսութիւնը տեղի ունեցաւ «Ատաթ Արի Էլ» ժողովարանին մէջ, Նորթ Յոլիվուտ: Ներկայ էին նաեւ Կոստական ժողովի ու Ազգային Վարչութեան անդամներ:

Պաշտօնական հիւրերուն շարքին էին Լոս Անճելըսի քաղաքապետական խորհուրդի նախագահ Էրիք Կարսեթի, Քալիֆորնիոյ խորհրդարանի անդամ Փօլ Գրիգորեան, Հայ Դատի Յանձնախումբի ներկայացուցիչներ եւ բազմահարիւր հանդիսականներ:

Հոգեւորական ու պետական անձնաւորութիւններ, ինչպէս նաեւ կազմակերպիչ միաւորին ներկայացուցիչները խօսք առին. յայտագիրը կ'ընդգրկէր գեղարուեստական բաժին մը, ապա նաեւ պարգեւներու յանձնումը: Ի խօսքին մէջ, Առաջնորդ Սրբազանը մասնաւորաբար շեշտեց, որ «պատմութեան ընթացքին, մարդկային իրաւանց բռնաբարումները յաճախ անդամալուծութեան մատնած են մեր աշխարհը: Աշխարհը խաղաղութիւն չի կրնար իրագործել առանց մարդկային իրաւունքներու ամբողջական յարգումին: Կենսական իրաւունքներու բռնադատութիւնը ցուցանիչ է արժէքներու կորուստին եւ մարդկային կեանքի արժէքին հանդէպ արհամարհանքի»:

## **PRELATE ATTENDS EVENT HONORING DR. J. MICHAEL HAGOPIAN AND DR. RICHARD HOVANISSIAN**

On the evening of Tuesday, May 15<sup>th</sup>, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, attended the first annual iWitness Awards, honoring genocide scholars Dr. J Michael Hagopian and Dr. Richard Hovanissian for their contributions to genocide studies and raising awareness about the Armenian Genocide. The event was organized by Jewish World Watch and took place at Adat Ari El Synagogue in North Hollywood. Accompanying the Prelate were members of the Religious and Executive Councils.

Also in attendance were Los Angeles City Council President Eric Garcetti, California State Assembly member Paul Krekorian, Armenian National Committee representatives, and hundreds of community members.

The program was comprised of remarks by religious leaders, elected officials, and representatives of World Watch, as well as musical interludes and the presentation of awards. In his remarks the Prelate stated “Throughout history, human right violations have plagued our world. Without a universal respect for human rights, the world cannot achieve peace. Violations of inherent rights represent an absence of value and respect for human life.”

This email is broadcasted by [Western Prelacy of the Armenian Church of America](http://www.westernprelacy.org) - 6252 Honolulu Ave, La Crescenta, CA 91214 - USA. If you have any questions or comments, please do not hesitate to call us at (818) 248-7737 or send us your request by email to [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org). Visit our Website [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org) Copyright . 2007 All rights reserved.